7. Եկամուտ - Թթուածնատ:	7. Թերթի երես - Անթուրիան (հակ.) - Անձնական դերանուն:
8. Մորթային բիծ - Շաղկապ - Ցարաբերական դերանուն:	8. Օծանելիք - Ճշմարտախոս:
9. Առարկայ - Ընչեղ:	9. Հայոց Ձ. ամիսը - Ուրբ (հակ.):
10. Տարբեր - Շողոթ - Բորթի՛ կամ գատի՛:	10. Իգական անուն - Ջերմ (հակ.) - Այրուբենէն:

**ԹԻՒ 5246**

**ԽԱՉԲԱՆՈՒՆ**

**ԼՈՒԾՈՒՄԸ**

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
2	Ա	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
3	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
4	Ա	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
5	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
6	Ա	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
7	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
8	Ա	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
9	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ
10	Ա	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն	Ն
11	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ

## ՍԱԿԱՐԱՆ

Պէտրոսի սակարահին մէջ օտար դրամահոյճերու փակման սակագիւցերը հետեւեալներն էին երկ.

Սուրիական թղթուկի	31,40 - 33,50	լ.ն.
Իրաքեան տինար	50,00 - 51,00	լ.ն.
Բուէյթեան տինար	4953,41 - 4957,42	լ.ն.
Յորդանանեան տինար	2124,41 - 2128,42	լ.ն.
Պահրէյնեան տինար	3995,00 - 4000,00	լ.ն.
Ա.Մ. Էմիրութեան տիրիալ	408,41 - 412,42	լ.ն.
Քարաբեան ռիալ	412,16 - 416,15	լ.ն.
Սէնուական ռիալ	399,88 - 403,99	լ.ն.
Օմանեան ռիալ	3900,00 - 3930,00	լ.ն.
Եգիպտական կինէ	321,71 - 325,72	լ.ն.
Անգլիական սթրլինգ	2343,65 - 2347,11	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1013,25 - 1017,52	լ.ն.
Թրքական լիրա	3,61 - 3,64	լ.ն.
Կիպրական փաունտ	2582,10 - 2586,17	լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,55 - 12,59	լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	2450 - 2451	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1514,00	լ.ն.
Քանադական տոլար	963,60 - 967,65	լ.ն.
Աւստրալիական տոլար	829,95 - 832,70	լ.ն.
Եւրօ	1472,90 - 1476,16	լ.ն.

● **ՈՍԿԻ**

Անգլիական մէկ ոսկի	115,000 - 125,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	108,500 - 118,500	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	95,500 - 105,500	լ.ն.
Մեքսիկական փետոս	569,500 - 589,500	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	15,000,000 - 15,500,000	լ.ն.
Մէկ օսն ոսկի	318,15 - 322,19	\$
Մէկ օսն արծաթ	4,52 - 4,57	\$

● **Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.**

Եւրօ	0.9759
Քանադական տոլար	1.5795
Չուիցերիական ֆրանք	1.5011
Ճափոնական եէն	120.00
Մէկ սթրլինգ	1.5549

● **ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՄՆԵԹՈՒՂԹԵՐ**

Գիւնի Ա. ճշդում Գիւնի Բ. ճշդում

Ա. կարգի	4 4/8	4 4/8
Բ. կարգի	-	-

բաժնետիր

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԱՅՐ ԳԵՈՐԳ Ս. ՎՐԴ. ՊԱԼԵՆԻ (Գալսկից Աբբահայր Միսիթարեան Միաբանութեան) վախճանման ջանքերը հոգեհոգաւորեց Վաղարշապատի կատարուի Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, Պիք-Ֆայայի Միսիթարեան Վանատան Ս. Յովհաննէս Մկրտիչ մատրան մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՓԱՌԵՆ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, յիշատակի պաշտամունք պիտի կատարուի Կիրակի, 15 Սեպտեմբեր 2002, Էջմեֆիէի Հայ Աւետ. եկեղեցու մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

## ★ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ★

★ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ)

13 Ուրբաբը կը նկատուի բէ բախտաբեր եւ բէ հակառակը: Այսօր սակայն լաւ 13 Ուրբաբ մըն է բոլոր անոնց համար, որոնք արգարութիւնը կը սիրեն:

★ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ուշադիր եղէք եւ շուտով «այո» մի՛ ըսէք հրաւերի մը կամ առուածի մէջ: Անիմաստ գնում մի կատարէք. վերջը կը զոյճաք:

★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Խանգարուած օր մը պիտի ունենաք շղայնութեան մը պատճառով: Ձեր շուրջը կ'ընկնեն հետ պիտի վարկի խստութեամբ: Կը զգաք ձեր սխալը, բայց չէք կրնար զայն սրբագրել:

★ **ԽԵՅԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Մի անտեսէք առողջապահական հարցերը: Եթէ տան մէջ ընտանի անասուն կը պահէք, անոնք եւս պէտք է ըլլան առողջ: Ձեր տունը գերծ պահեցէք մանրեցերէ:

★ **ԱՌԻԻԾ** (24 Յունիսէն 23 Օգոստոս)

Երեկոյթի մը հրաւերին ընդունաջեցէք, հոն պիտի հանդիպիք հանելի անձի մը, որ ձեր սրտին կը խօսի: Եղէք հանոյակատար:

★ **ԿՈՅ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Առուին մեքենաները կամ գործիքները եթէ խանգարուած են, լաւ վարպետ մը գտէք, որպէսզի զանոնք վերանորոգէ լաւ ձեւով:

★ **ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ձեր սիրած անձին հետ մտերմիկ շաբաթավերջ մը անցուցէք, դուրս գալու համար առօրեայ ձեր միօրինակութեանը, որ կրնայ ազդել ձեր տրամադրութեան վատբարացման:

★ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ձեր շրջապատին հանելի բուելու համար պիտի կատարէք նուրբ հարցի մը լուծումը, ի վնաս ձեր պիտոնէին: Ասիկա տրամաբանական չէ: Խոհեմ եղէք:

★ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Թոյլ տուէք, որ խեղկատակները, ծաղրողները ընեն իրենց ուզածը: Կարեւորութիւն մի տաք անոնց, որպէսզի ծիծաղելի ըլլաք:

★ **ԱՅԾԵՂՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Պիտի անցընէք մղձաւանջային գիշեր մը, որ ձեր տրամադրութիւնը պիտի խանգարէ ամբողջ օրուան տեսողութեան: Դժուարութիւն պիտի ունենաք ուրիշներու հետ յարաբերելու:

★ **ՇՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Բարեկամներու հետ պիտի հրաւիրուիք երեկոյթի մը, ուր պիտի զգաք մեծ ուրախութիւն, գոր պիտի չմոռնաք ամբողջ ձեր կեանքին ընթացքին:

★ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Աշխատանքի մարզին մէջ անարդարութիւններ պիտի խոռվեն ձեզ, բայց ոչինչ պիտի կարենաք ընել մթնոլորտը փոխելու համար: Ձեզի կը մնայ համբերել:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԳԵՄ / ՉՔՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ

## ՔԱՄԱՌՈՒՀԱՅԻ ԱՆՏԱՌԸ ԻՐ ՎԻՃԱԿԻՆ

### ԶԳՈՒԱԾ ԲՆՈՒԹԵԱՆ ԳՈՀԱՐ ՄԸ



Լիբանանի հիւսիսարեւմտային Աքքարի Քամմուհա անտառը կը հանդիսանայ երկրին հապուաղէպօրէն անաղարտ մնացած բնութեան այն երկրի վայրերէն, զոր կարելի է տակաւին այցելել:

Այս անտառին մէջ մայրիկ եւ եղեւնի ծառերը իրենց խտութեամբ կը յառաջացնեն ընդարձակ ստուերոտ տարածութիւն մը, որ սակայն տակաւին չէ անցած Լիբանանի մէջ բնութեան պահպանում տարածքներու շարքին: Հոն տակաւին կը կազմակերպուին բարձրագոյն իրաւունքներ, որոնք կը վտանգեն անտառին գոյութիւնը, իսկ տախտակէ իրեր եւ վարդէղէններ պատրաստողները սպառողներու համարձակ հ'օգտուին անտառի ծառերուն ընտիր տեսակի փայտերէն:

Քամմուհա կը գտնուի ծովու մակերեսէն 1400-2250 մետր բարձրութեան վրայ: Ան ձեւով մը կը հանդիսանայ Լիբանանի եւ Սուրիոյ բնական սահմաններէն մէկը: Անոր ծառատեսակներուն եւ կենդանական աշխարհին բազմազանութիւնը կայն կը վերածեն Լիբանանի ամենէն հարուստ անտառներէն մէկուն: Հոն կան ծառերու 42

բնութեան 1600 տեսակներ: Ֆրանսացի բուսաբաններու արժեւորումով, Քամմուհայի մայրիկներուն տարիքը կը հասնի մինչեւ 2000 տարւան:

Իրերէն հնագիտական արժեք ունեցող վայր, Քամմուհայի անտառին մասին կարելի է ըսել այն, որ ան եղած է հոռու մէջքի եւ բարեկրօնացի թագաւորներու պալատներուն շինանիւթ հայրապետի վայրերէն մէկը:

Շրջանին պատասխանատուները պարտաւորուած կարելի է լ'ընեն անտառը հանրութեան տրամադրութեան տակ պահելու եւ միաժամանակ կենսոլորտային անոր իւրաքանչիւր անտառի պահպանելու համար: Այս նպատակին իրենց նպաստը կը բերեն կենսոլորտի պաշտպան միութիւններ, որոնք կը փորձեն անտառը այս պարագային կենսոլորտային տեղեկութիւններ փոխանցող եւ անտառին պահպանման համար ցուցումներ տուող խմբակներու: Պէտք է նշել, որ շրջանին գիւղացիները իրենք եւս շարժում մը կը ստեղծեն անտառին մերձակայքը՝ վաճառելով ուտեստեղէնի տնային արտադրութիւններ:

Քամմուհայի անտառը թէեւ կը մնայ Պէյրութին հեռու վայր մը, սակայն անպայման որ ան կ'արդարացնէ իր այցելուներուն ակնկալութիւնները:

### ՀՆՈՒՏԵՍԻԼ

<p><b>Թ. Է. Լ.</b> 10:00. - Սապահո 12:30. - Միւլպիք 13:00. - Մաքուլ հանա 14:00. - Ետրոնիւզ 14:30. - Լուրեր 15:00. - Մըշուար 17:00. - Պէսք սելըր 18:00. - Շըրլի Հոյմ 18:30. - Արաբական ֆիլմաշար 19:30. - Արաբ. լուրեր 20:00. - Տեղական ֆիլմաշար 22:00. - Տեղական ֆիլմաշար 23:00. - Ամերիկեան ֆիլմաշար</p>	<p><b>Է. Պ. Է.</b> 15:00. - Լուրեր 16:00. - Մննա ու ֆինա 17:00. - Վաւերագրական 17:30. - Սինեմա / 35 mm 18:00. - Նո ջոմէնթ 18:15. - Թիֆուլուս 19:00. - Լուրեր 20:00. - Մըն այ սապահիա 20:30. - Արաբական յայտագիր 22:00. - Մասայա 23:00. - Թահքիթ այ էաուն</p>	<p>«Զգուշացէք, կապիկներ են» 16:00. - Հեռուստատեսիայ «Սիրոյ կախարհանք» 17:00. - Երեկոյեան Երեւան 17:20. - Միտաղի տուն 18:10. - Ալլուր 18:20. - Եկեղեցական կէանք 18:35. - Տուն-տունիկ 19:00. - Հայրուր 19:50. - Որակի նշան 20:00. - Երկար ժապաւէն՝ «Անիծուածները» 20:25. - «Ում է ժպտում կէանքը» 21:40. - Պոէզիայի ակնարարներ 22:00. - Հայրուր 22:20. - Կէս գիշերային ձայնաշար 23:20. - Հայրուր (ռուսերէն) 23:25. - Հայրուր (անգլերէն) 23:30. - Երեկոյեան Երեւան 23:45. - Ալլուր 00:00. - Լուր 00:05. - Լուր 10 01:00. - Լուր 01:05. - Լուր 10 01:55. - Նորատետր 02:00. - Լուր 02:05. - Լուր 10 03:00. - Հայրուր 04:00. - Հեռուստատեսիայ «Էնդիսուպի անդժուածը» 04:25. - Եւրասիական Երեւան 05:00. - Երկար ժապաւէն՝ «Անիծուածները» 06:30. - Մուլտֆիլմ «Զգուշացէք, կապիկներ են» 06:40. - Պոէզիայի ակնարարներ 06:50. - Ալլուր</p>
--	--	---

**ՆՈՒԹ. ՎԻ.**  
7:30. - Լուրեր  
8:30. - Երկար  
09:00. - Սապահի լուրեր  
12:30. - Սէն Թրոֆիէ  
13:30. - Տեղական  
ֆիլմաշար


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍԱՏԵՍՈՒԹՅԱՆ**  
06:00. - Առաջին ծրագիր  
07:00. - Հայրուր  
07:20. - Առաջին ծրագիր  
08:25. - Բոհեմ  
09:00. - Հեռուստատեսիայ  
«Սիրոյ կախարհանք»  
09:45. - Կէս գիշերային  
ձայնաշար  
10:40. - Բարի ախորժակ  
11:00. - Հայրուր  
11:20. - Թուրքիոյ +  
12:00. - Լուր  
12:05. - Լուր 10  
13:00. - Լուր  
13:05. - Լուր 10  
13:55. - Նորատետր  
14:00. - Լուր  
14:05. - Լուր 10  
15:00. - Հայրուր  
15:20. - Մուլտֆիլմեր  
«Քաղաքի մուկը եւ  
դաշտային մուկը»,

**ՍՈՒՍԹԱՓՊԱԼ**  
7:00. - Լուրեր  
8:30. - Այամ  
այ սապահ  
13:00. - Յիշէ ինձ  
13:05. - Նոր յիստիկ  
14:00. - Անգլերէնով  
լուրեր  
14:20. - Ֆրանսերէնով  
լուրեր  
14:40. - Հայերէնով  
լուրեր  
15:30. - Արաբական  
ֆիլմաշար  
16:30. - Թելեթայիկ  
17:00. - Ըզդար ըզպար  
17:30. - Արաբական  
ֆիլմաշար  
18:30. - Միւլպիքանա  
20:00. - Արաբերէն  
լուրեր

(\*) Վերոյիշեալ յայտարարները եւրոպական կրկն ըլլալ որոշ փոփոխութիւններու:

# ՄԱՐԶԱԿԱՆ

# ԱՇԽԱՐՀ



## ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈՒԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Երկրասարգուծեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Թովնանեան երէկ ընդունեց ֆուտբոլի Ասիոյ ֆետերասիոնի նախագահ Մոհամէտ Պըն Հիմամը եւ Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնի նախագահ Հիշամ Հայտարը, որոնց հետ քննարկեց Լիբանանի մէջ ֆուտբոլի կացութիւնը:

Հանդիպումէն ետք Հիմամ յայտնեց, որ անձնապէս իր եւ Ասիոյ ֆետերասիոնի օժանդակութիւնը պիտի տրամադրուի՝ բարելաւելու համար Լիբանանեան ֆուտբոլի մակարդակը:

Նախարար Թովնանեանի այցելեցին նաեւ Լիբանանի ըմբշամարտի ֆետերասիոնի նախագահ Ալի Ժրատին, Շուկան ակումբի նախագահ Սամի Բապալաուտին, Եւրոպայի ըմբշամարտի ասոցիան ժուլիա Բապալաուտի եւ Լիբանանի ասոցիան Թինա Չաքարեան: Հանդիպումին քննարկուեցան ըմբշամարտի յատուկ հարցեր եւ զեկուցուեցաւ, որ ըմբշամարտի կանանց աշխարհի ասոցիանութիւնը տեղի պիտի ունենայ Թուրքիոյ մէջ եւ անոր պիտի մասնակցին երկու ասոցիաններ՝ ժուլիա Բապալաուտի եւ Թինա Չաքարեան:

Միւս կողմէ, նախարար Թովնանեան ընդունեց նաեւ որսորդութեան եւ նշանակութեան ֆետերասիոնի նախագահ Փիեռ Ժալախը, որուն հետ քննարկեց նշեալ ֆետերասիոնի կացութիւնը:

### ՊԱՏՔԵԹՊՈՒ

## Հ. Մ. Ը. Մ. Ի ՊԱՍՔԷԹԻ ՄԻՋՄԱՍՆԱՃԻՂԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔ

Հ. Մ. Ը. Մ. Լիբանանի Շրջանային Վարչութեան պատգեթպոլի յանձնախումբը կազմակերպած է միջմասնաճիւղային մրցաշարք մը, որ տեղի պիտի ունենայ Այնճարի մէջ՝ 14 Սեպտեմբերէն 13 Հոկտեմբեր:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Հ. Մ. Ը. Մ. Ի Անթիլիասի, Այնճարի, Թրիփոլի, Պէյրութի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերը: Մրցաշարքը բաժնուած է չորս տարբեր խմբակներու՝ մեծ աղջիկներ, մեծ տղաք, փոքր աղջիկներ եւ փոքր տղաք: Ստորեւ՝ Ա. հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

**ՇԱՐՔԻ 14 ՍԵՊՏԵՄԲԵՐ**  
Ժամը 4:30ին՝ Պուրճ Համուտ - Այնճար (փոքր տղաք)  
Ժամը 5:30ին՝ Պուրճ Համուտ - Այնճար (մեծ աղջիկներ)  
Ժամը 6:30ին՝ Պուրճ Համուտ - Այնճար (մեծ տղաք)

**ԿԻՐԱԿԻ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ**  
Ժամը 5:00ին՝ Այնճար - Թրիփոլի (փոքր տղաք)  
Ժամը 6:00ին՝ Անթիլիաս - Թրիփոլի (մեծ աղջիկներ)  
Ժամը 7:00ին՝ Անթիլիաս - Թրիփոլի (մեծ տղաք)

**ԱՅՆՃԱՐ ԱՅՆՃԱՐ**

**ՄՈՒՍԱԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 87ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ**

- **Քանդակներու անհատական ցուցահանդես**, արուեստագետ **ՎԱՐՈՒԺԱՆ ՄԱՐՏԻՐԵԱՆԻ**. հովանավորութեամբ Հայաստանի դեսպան **ԱՐԵՎ ՅՈՎԿԱՆՆԻՍԵԱՆԻ** Բացում Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2002, երեկոյեան ժամը 7:30ին, «Սարգիս Չէլթեան» ժողովրդային տան մէջ:
- **ԾԱՆՕԹ** - **Ցուցահանդեսը բաց պիտի մնայ Ծաբաթ 14 եւ Կիրակի 15 Սեպտեմբեր 2002, առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ ուշ գիշեր:**
- **Հանդիպում-զրոյց**՝ դեսպան **ԱՐԵՎ ՅՈՎԿԱՆՆԻՍԵԱՆԻ** հետ, միթ՝ «Հայաստանը այսօր եւ վաղը»: Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 13 Սեպտեմբեր 2002, երեկոյեան ժամը 8:30ին, «Գ. Կիւլպենկեան» սրահին մէջ:
- **Ժողովրդային տոնախմբութիւն եւ ազգային յեղափոխական երգերու փառատոն**, կ'երգեն **ՎԻՂԵՆ ՏԻՉԵՔԷՆԵԱՆ** **ՍԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆ** **ՍԻԼՎԻ ՏԵՄԻՐՃԵԱՆ** **ԳՕԳՕ ԹԻԹԻՒՆՃԵԱՆ** Մասնակցութեամբ՝ օրկամիստներ **ՐԱՖԻԿ ՏՕՆԵՐԵԱՆ** **ԵՒ ՅՈՎԿԱ ԱՏՈՒՐԵԱՆ** Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 14 Սեպտեմբեր, երեկոյեան ժամը 10:00ին, Յուշարձան համալիրի շրջափակէն մերս:
- «Սուսա Լեռ Այնճար» թանգարանի շէնքի հիմնադրութիւն:
- Տեղի կ'ունենայ Կիրակի, 15 Սեպտեմբեր, յաւարտ Ա. պատարագի, Սուսան Լեռան յուշարձանի կողքին, մասնակցութեամբ լիբանանահայ երեք համայնքներու անասնորդներուն: Հիմնարկէին կը յայտարարուի արձանակազմութեան մասին:

**Հ. Յ. Դ. «ԿԱՐՄՈՒ ԼԵՈ» ԿՊՄՏԻ ՂԱՍՏ. ՍԱՐՄԻՆ**

## ՖՈՒՏԻՒԼԱ 1 ԵՐԱՋԱՅԻՆ ՄՈՆՁԱՆ

Այս շաբաթավերջին, Մոնպա պիտի հիւրընկալէ իր 73րդ կրան փրին: Աւելի քան յիսուն տարիներ Ֆորմիլա 1ի համակիրները հետեւած են այս իրադարձութեանը քաղաքի մէջ տեղի ունեցող մրցումներուն, որոնք միշտ ալ եղած են յիշատակելի՝ յատկապէս «թիֆոպի»ներուն համար:



Մոնգա

Միլանէն 15 քիլոմետր դէպի հիւսիս-արեւելք գտնուող Մոնպալի վայրուղին, որուն պաշտօնական անունն է «Օրոտրոնո Նազիոնալէ Մոնպա», կառուցուած է 1922ին: Տարիներու ընթացքին վայրուղին, որ նաեւ ծանօթ է իբրեւ «Լա Փիսթա Մաժիքա», ենթարկուած է բազմաթիւ փոփոխութիւններու, յաճախ մղուած ապահովութեան նկատառումներէ, թէեւ Մոնպա միշտ ալ մնացած է անվախ եւ խիպախ վարորդներու վայրուղին:

Հակառակ տարիներուն ընթացքին տեղի ունեցած փոփոխութիւններուն, մէկ բան

մնացած է անփոփոխ, եւ այդ՝ իտալացի համակիրներն են, որոնք վերամկրտուած են «թիֆոպի» անունով: Ծայրայեղական ըլլալու աստիճան ռեկորդներուն պահանջը յստակ է՝ Տեռաբի միշտադրական պէտք է դուրս գայ Մոնպալին: Իսկ այս շաբաթավերջին՝ անոնք Տեռաբիէն կը սպասեն տուպէ մը իրագործել գրաւելով առաջին եւ երկրորդ դիրքերը՝ ակնկալութիւն մը, որուն իրականացումը ղուար է նոյնիսկ Շուսալըրի կարծիքով:

Մոնպալի վայրուղին իրաքանչիւր լէփը շուրջ 5,8 քմ. երկայնք ունի: Յառաջիկայ Կիրակի, վարորդները 53 անգամ շրջանը պիտի ընեն վայրուղիին, կտրելով 306,7 քմ. տարածութիւն: Թէեւ դժուար է նախատեսել, թէ ո՞վ պիտի ըլլայ 53 լէփ ետք ամենէն լայն ժպիտը ունեցողը, սակայն այս տարեշրջանին ցարդ տեղի ունեցած 14 կրան փրիններէն 12ը շահած Մայքըլ Շուսալըր բնականաբար պիտի չուի Տեռաբիի տան մէջ դժգոհ պահել տնեցիները՝ «թիֆոպի»ները, յոյս ցնդեցնելով իրենց երապները...

## ԹԵՆԻՍ. ՄԻՋԱՋԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔՆԵՐ ՄԱՃԻՆ ԵՒ ՀԱՍՏ ԳՈՒՐՄ ՄՆԱՅԻՆ, ՔՈՒՐՆԻՔՈՎԱ ՅԱՂԹԵՅ

### ԹԱՇԷՆՏԻ ՄՐՅԱՇԱՐՔ

Թաշէնտի մէջ տեղի ունեցող թենիսի «Փրեզիտընթս Բափ» միջազգային մրցաշարքի բառորդ աւարտականի մրցումներուն, Թոմի Հասա, որ 2րդ հանգրուանին յաղթած էր հայրենի մարզիկ Սարգիս Սարգսեանի, վերաւորուած ըլլալով՝ չկրցաւ պիտուտու վարտիմիր Վոլչեքովի դէմ իր մրցումը աւարտել:

Իր կարգին, անցեալ տարուան Թաշէնտի մրցաշարքի տիտղոսակիր Ռուս Մարաթ Սաֆին տեղի տուած թայլէնտի փարատորն Սրիչափանի դէմաց:

Այսօր տեղի ունենալիք կրիստալականի մրցումներուն, Վոլչեքով պիտի մրցի մրցաշարքի թիւ 3ին՝ իտալացի Տալիտ Սանկինէթիի դէմ, որ իր կարգին տապալեց Բրիսթիան Փլէսը: Փարատորն իր դիմաց պիտի ունենայ Բաֆինիթովը:

Ստորեւ՝ բառորդ աւարտականի արդիւնքները.  
Վլադիմիր Վոլչեքով (Պիեռոսկիա) - Թոմի Հասա (Գերմանիա) 6-2, 2-1  
Փարատորն Սրիչափան (Թայլէնտ) - Մա-րաթ Սաֆին (Ռուսիա) 6-3, 7-6



Զուրնիքովա

Տալիտ Սանկինէթի (Իտալիա) - Բրիսթիան Փլէս (Գերմանիա) 4-6, 7-6, 6-2  
Եւգենի Բաֆինիթով (Ռուսիա) - Իվան Լիուպիչի (Նիւզլանդիա) 6-3, 6-2

## ՀԵՐԱՍ ՇԱՀԵՑԱԻ ԵՐԿ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Երէկ տեղի ունեցաւ Սպանիոյ շրջավայրէն 6րդ հանգրուանի մրցումը, որ վերջ գտաւ սպանացի Բոպարտո շերտի յաղթանակով: «ԵՆ. ԵՍ. Փոսթըլ» խումբին հեծելանորդը, որ շահած էր 2000ի «Վոլեյթան», այս հանգրուանի 153,1 քիլոմետր տարածութիւնը կտրեց 56 վայրկեան եւ 47 երկվայրկեանի մէջ: Իտալացի Ժիլպերթո Սիմոնի հանդիսացաւ երկրորդ, իսկ սպանացի Օսքար Սեվիլյա՝ երրորդ: Այս վերջինը, որ անցեալ տարուան «Վոլեյթան» փոխ պիտուեան հանդիսացած էր, այժմ կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը:

## ՓԻՆԿ-ՓՈՐԿ ԼԱՐԱ ՔԵՉԷՊԱՇԵԱՆ - ԼԻՉԱ ՊԱՐԻԿԵԱՆ ԶՈՅԳԸ ՀԱՍԱԻ ԱԲԱՐՏԱԿԱՆ

Երէկ «Միշլի Մըր» մարզահամալիրին մէջ շարունակուեցան Լիբանանի փինկ-փոնկի ասոցիանութեան մրցումները:

Խառն զոյգի մրցումներուն, իրենց բառորդ աւարտականի մրցումները 3-0 արդիւնքով յաղթելէ ետք, Լիզա Պարիկեան - Ալֆրէտո Նաժմ Սարգիսեան եւ Լարա Քէչէպաշեան - Ռազմիկ Շէմժէմեան զոյգերը 3-2 արդիւնքով պարտուեցան յաղորդաբար Լարիսա Շըհէյա - Մոհամէտ Հապաշ եւ Դատա Ըլէյլաթ - Մոհամէտ Շըրիփի զոյգերուն դէմ:

Զոյգ աղջկանց մրցումներուն, Լարա Քէչէպաշեան - Լիզա Պարիկեան զոյգը կրիստալականին 3-2 արդիւնքով տապալեց Դատա Ըլէյլաթ - Ռուպա Պաշէյա զոյգը, ապահովելով աւարտական հանգրուանի իրենց տոմսերը: Աւարտականին Հ. Մ. Ը. Մ. ական զոյգը պիտի մրցին Լարիսա Շըհէյա - Ռիթա Պաշէյա զոյգին դէմ:

Նշենք, որ տղոց անհատական եւ զոյգի մրցումները, զոյգ աղջկանց աւարտական մրցումները եւ խառն զոյգի աւարտական ճակատումները տեղի պիտի ունենան վաղը՝ Ծաբաթ, 14 Սեպտեմբերին:

### ԼՈՒՐԵՐ ԱՅՐԵՆԻ ՍԱՐՁԱՇԽԱՐԷՆ

## ՆԻՔԻԹԱ ՍԻՄՈՆԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ՀԱԻԱՔԱԿԱՆԻ ՄԱՐԶԻՉ

27 Սեպտեմբերին, Աշխարհի եւ նախկին Խորհրդային Միութեան հաւաքականները պիտի կատարեն ֆուտբոլի բարեկամական մրցում մը՝ նուիրուած նշանաւոր ֆուտբոլիստ Օլէկ Պլոխինի 50ամեակին:

Բիելի մէջ տեղի ունենալիք այս մրցումին, Աշխարհի ֆուտբոլի հաւաքականը պիտի զլխաւորէ հայրենի բազմալաստակ ֆուտբոլիստ եւ «Արարատ»ը փառաւոր յաղթանակներու առաջնորդած մարզիչ Նիքիթա Սիմոնեանը:

● **ՀԱՅԱՍՏԱՆԻ** տղոց ճատրակի ասոցիանութեան երկրորդ հանգրուանի մրցումներէն ետք, երկուքականի կէտով պարագլուխի դիրքը կը գրաւեն Աշոտ Անաստասեան եւ Տիգրան Նալպանտեան:

● **ՔՈՒՐՆԻՔՈՒ** մէջ տեղի ունենալիք Արարական աշխարհի ֆուտբոլի բաժակին (Դեկտեմբեր 2002) համար կատարած իր նախապատրաստութիւններուն ծիրէն ներս, Յորդանանի ֆուտբոլի ֆետերասիոնը Ամման հրաւիրեց Հայաստանի հաւաքականը՝ Հոկտեմբեր 11ին բարեկամական մրցումի մը համար:

### ՖՈՒՏԻՒՄ

## Հ. Մ. Ը. Մ. Ի ԿՐՏԱՆԵՐՆԵՐ ԿՄՐՁԱՆԱԳՐԵՆ ՅԱՂԱՍԱԿՆԵՐ

Հինգշաբթի, 5 Սեպտեմբերին, Հ. Մ. Ը. Մ. Ի կրտսերներու խումբը 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Պէյրութի Ամերիկեան Համալսարանի կազմը:

Ծաբաթ, 7 Սեպտեմբերին, Հ. Մ. Ը. Մ. Ի կրտսերներու Բ. խումբը մրցեցաւ Տըքուսէի խումբին դէմ եւ արձանագրեց 3-0 արդիւնքով յաղթանակ մը: Նշենք, որ յառաջիկայ երկուշաբթի, 16 Սեպտեմբերին պիտի սկսի ֆուտբոլի մրցաշարք մը՝ կազմակերպութեամբ Հ. Մ. Ը. Մ. Ի կրտսերներու յանձնախումբին եւ մասնակցութեամբ Հ. Մ. Ը. Մ. Ի կրտսեր զոյգ խումբերուն, Հ. Մ. Ը. Մ. Ի կրտսեր Պէյրութի Ամերիկեան Համալսարանի, «Ինթընէշնըլ Քոլէճ»ի եւ «Մասիս» խումբին:

## ԱՉԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՖԻԱ ՅԱԿՈԲԵԱՆ ՔՈՒԼԵԸ

ԹԵՆ. 01 / 262618  
e-mail: sofiahag@inco.com.lb

### ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան ընլէճի 2002 - 2003 տարեշրջանի արձանագրութիւնները սկսած են կը շարունակուին մինչեւ Երեքշաբթի, 25 Սեպտեմբեր, ամէն օր ժամը 9:00էն 1:00, բացի Ծաբաթ օրերէն: Ընլէճը ունի ֆրանսերէն եւ անգլերէն բաժները:

**ԹԵՔՆԻԿ ԲԱԺԱՆՈՒՆԷՔ**  
Յառաջիկայ տարեշրջանին, ընլէճէն մերս կը հաստատուի նաեւ **թեքնիկ բաժանմունք** (BT), ուր կրնան յաճախել ինժեներող դասարանը աւարտած աշակերտները:

**ՎԵՐԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ**  
Վերաքննութիւնները տեղի կ'ունենան հետեւեալ քուականներուն.  
Երեքշաբթի, 17 Սեպտեմբեր - Լեւոններ:  
Չորեքշաբթի, 18 Սեպտեմբեր - գիտական միջոց եւ ուսողութիւն:  
Հինգշաբթի, 19 Սեպտեմբեր - այլ միջոցներ:  
Վերաքննութիւնները կը սկսին առաւօտեան ժամը 8:30ին:  
**ՎԵՐԱՄՈՒՏ**  
ԺԲ. կարգ - Հինգշաբթի, 19 Սեպտեմբեր 2002  
Վերաքննարկ եւ երկրորդական - Հինգշաբթի, 3 Նոյեմբեր 2002

### ԻՍՐԱԵԼ ԿԸ ԸՆԴՈՒՆԱԿԵ ՔԱՆԳԵԼ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆատի գլխաւոր խորհրդատուն կոչ ուղղեց քաղաքական միասնականութեան, այն պահուն, երբ նախագահը կը փորձէր ամրապնդել իր իշխանութիւնը՝ կառավարութեան հրաժարականին լոյսին տակ:

Արաֆատը Չորեքշաբթի օր ընդունած էր կառավարութեան հրաժարականը, իսկապէս իր խորհրդարանին մէջ ճակատումէ մը, որուն արդիւնքը ամօթալի պիտի ըլլար պաղեստինցի նախագահին համար, որովհետեւ շատ հաւանաբար օրէնսդիր իշխանութեան պիտի մերժէին վստահութեան քուէ տալ առաջարկուած կառավարութեան: Արաֆատը, որ զօրաւոր հարուած մը ստացաւ եւ խորհրդարանէն եւ իր ղեկավարած Ֆարաժ շարժումէն, տասնչորս օր պայմանաժամ ունի նոր կառավարութիւն նշանակելու համար: Նապի Սլու Ռուտայնա ըսաւ, որ բոլոր ճիգերը պէտք է կեդրոնանան պաղեստինեան ներքին ճակատը ամրապնդելու եւ միասնականութիւն կերտելու, որպէսզի կարելի ըլլայ ձեռքբալ տիրոջ իտրայէեան գրաւումն:

Պաղեստինեան օրէնսդիր խորհուրդին նախագահը՝ Սպտէլթարիմ Սլու Սալէ ըսաւ, որ կառավարութիւնը պիտի չկարենար վստահութեան քուէն շահիլ: Ան աւելցուց, որ խորհրդարանը կը յուսայ, որ նոր կառավարութեան մաս պիտի կազմեն երիտասարդ մարդիկ, որոնց պիտի կարենայ վստահիլ ժողովուրդը: Նոր նախարարները պէտք է ըլլան ազգային գործունէութիւն ունեցող մարդիկ, որպէսզի պաղեստինցի ժողովուրդը վստահի անոնց:

Իտրայէեան ուժեր երէկ Կապալի մէջ պաղեստինցիներու պատկանող ութ բնակարաններ քանդեցին՝ արեւմտագէշն առաջ գործուած ներխուժումներու ընթացքին, յայտնեցին կապիտալներ:

Պաղեստինցի պաշտօնատարներ հաստատեցին լուրը, յայտնելով, որ իտրայէեան ներխուժող ուժերուն եւ պաղեստինցի պինտայիներուն միջեւ բախումներ արձանագրուած են Երժայի գիւղին մէջ, Կապալի արեւելեան շրջանը: Երժայի մէջ քանդուեցան երեք բնակարաններ, Մաղաֆի գաղթականային մէջ՝ երկու բնակարաններ, իսկ Ռաֆիի գաղթականային մէջ՝ երեք բնակարաններ:

Իտրայէեան բանակը հաստատեց, որ քանդած է «ախաբէկիներու» ընտանիքներու պատկանող բնակարաններ:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՅՈՒՐԵԱ

### ԵՐԼՍԱԶ Կ'ԱՌԱՋԱՐԿԵ ՆՈՅԵՄԲԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՅԵՏԱԶԳԵԼ

ԱՆԳԱՐԱ, 12 (ՌՈՅԹԸՐԸ).— Թուրքիոյ փոխ վարչապետ պահպանողական Մեսութ Երլմազ Հինգշաբթի օր առաջարկած է Նոյեմբերի ընտրութիւնները յետաձգել, այն պատճառաբանութեամբ, որ այդ ձեւով Թուրքիա ժամանակ պիտի չափ թարեկարգուամբ վաւերացնելու եւ Եւրոպական Միութեան մէջ իր ապագան ապահովելու համար:

Սակայն, նախագահ Ահմէթ Նեճմէթ Սեզըր յայտնած է, որ խորհրդարանին վաղը պիտի վնասուի եթէ ընտրութիւնները յետաձգուին: Երկրին գլխաւոր կուսակցութիւնները, ներառեալ՝ Երլմազի Մայր Հայրենիք կուսակցութիւնը, ունին այն մտաւայելութիւնը, թէ ընտրութեան մէջ պարտութիւն պիտի կրեն:

Թետաձգման մասին մտահոգութիւններ ստեղծուցած են շուկաները, որոնք ընտրութիւնները բանալի կը նկատեն Դրամական Միջազգային Ֆոնտին հետ գոյացած 16 միլիարտ տոլար արժողութեամբ համաձայնութեան գործադրութեան համար անհրաժեշտ քաղաքական կայունութեան:

Չորեքշաբթի օր Երլմազ փարատած էր շուկաներուն մտահոգութիւնները, հերքելով, թէ որեւէ ծրար գիր չունի գորակցութիւն հետապնդելու՝ ընտրութիւնները յետաձգելու համար: Սակայն Հինգշաբթի օր, Պրիւքթի մէջ, ան ըսած է, որ ընտրութիւնները պէտք է կայացուին Դեկտեմբեր 15ին, Ե. Միութեան Քոփենհէյկի պահանջովն ենք, որուն ընթացքին Թուրքիա կը յուսայ, որ թուական մը պիտի ճշդուի, լիիրաւ անդամակցութեան համար բանակցութիւններու սկսելու նպատակով:

Երլմազ դարձեալ առաջարկած է, որ անկողմեան Ազգայնական Գործի կուսակցութիւնը արտաքսուի կառավարութենէն՝ անոր իրական կայունութեան պատճառով, վերջերս խորհրդարանին կողմէ վաւերացուած մարդկային իրաւանց մարզի բարեկարգումներ ընդել տալու համար:

### ՓՈՒԹԻՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ

Շարունակուած Ա. ԷԶԸ  
է պատրաստել ցանկ մը՝ վրացական հողամասերու վրայ ըմբռնութեան կեդրոններու, գորս կարելի է հարուածել:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերգէյ Իվանով «ԻՆՅՔՐԲԱՆ» լրատու գործակալութեան յայտնած է, թէ ցանկը քանի մը օրէն պատրաստ պիտի ըլլայ:

### ԸՆԿՆՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՍԸ ԳՈՅԱՅՈՒՄ

Փութինի նամակը կը գուզադիպէր Սեպտեմբեր 11ի յարձակումներուն առաջին տարեդարձին եւ իրաքի ղէմ գինուորական գործողութեան մը գծով գորակցութիւն ապահովելու ամերիկեան ճիգերուն:

Ռուսիա կ'ընդգծմանայ այդ գաղափարին: «Մոսկուա կ'ընդգծէ համաձայնութիւն մը ապահովել լուսինի պահանջով իրաքի ղէմ ամերիկեան յարձակումի մը գծով, որուն ղեմաց մամերիկեան հասնութիւնը ձեռք բերելի փանջիսի մէջ ռուսական հարուածներու առնչութեամբ», կ'ըսեն ռուս եւ վրացի ղէտեր:

Վրացի անկախ մեկնաբան Չուրպպ Չիպաբաշվի յայտնած է, որ Փութին ուզած է նախագահ Ճորժ Պուշկին յայտնել, որ եթէ Մ. Նահանգներ կրնան իրաքի վրայ յարձակում գործել, ապա Ռուսիա նոյնը կրնայ ընել փանջիսի կրճի մէջ:

Ըստ ռուս մեկնաբան Փաւլ Գեկիկեանուրի՝ կրճիսի ղեկավարին յայտարարութիւնը «գործողութեան մը պատրաստութիւն է, այլ գործողութիւնը կը փոխարինէ»: Ան ղիտել յայտնած է, որ Հոկտեմբերին լեռնային անցքերու վրայ ձիւնը արդէն բախումները անկարելի կը դարձնէ:

ՔՈՅԻ ԱՆԱՆ ԿԸ ՄԵՐԺԵ  
ՄԻԱԿՈՂԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՈՎ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ


### ԻՐԱՔ ՍԱՐՏԱՆՈՒԹԵՐ Կ'ՈՒՂՂԵ ՈՒԱՇԻՆԿԹԸՆԻ

Այն պահուն, երբ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորժ Պուշկին իրաքի ղէմ իր գաղտնի կը պաշտպանէր ՄԱԿի Ընդհանուր Ժողովին, Պաղեստ մարտահրաւէր ուղղեց Ուաշինկթընի, յայտարարելով, որ պատրաստ է ետ մղելու որեւէ յարձակում ու ներխուժում՝ պաշտպանութեան համար գործածելով տրամադրութեան տակ ամէն ձեւի զէնքերով, որոնց կարգին են խոհանոցի զանակները, գաւազանները եւ քարերը:

Արտաքին գործոց նախարար Նաթի Սպարի, որ կը խօսէր Պուշի ելույթէն քանի մը ժամ առաջ, ըսաւ, որ Պաղեստ տակաւին կը յուսայ խուսափիլ յարձակումէ մը: Սակայն ան աւելցուց, որ եթէ յարձակումը իրականութեան դառնայ, իրաքիցիները ինքնապաշտպանութեան ամէն միջոցի պիտի դիմեն: «Պիտի չարտօնենք, որ սիւնականները ներխուժեն մեր երկիրը», ըսաւ Սպարի:

Սպարի ըսաւ նաեւ, որ իրաք պատրաստ է վերընդունելու զէնքի քննիչներ՝ պայմանաւ որ անոնց գործունէութիւնը մնայ ՄԱԿի որոշումներուն շրջանէն ներս ու յատկապէս ճշդուի, թէ քննութիւնները ե՞րբ պիտի աւարտին ու անոնց լոյսին տակ՝ պատժամիջոցները ե՞րբ պիտի ընդունին: Սպարի շեշտեց, որ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի բոլոր որոշումները պէտք է կիրարկուին, ոչ թէ այն բաժինը միայն, որ քննիչներուն վերադարձին կ'առնուի: Ան աւելցուց, որ Ուաշինկթընը կը շահագործէ քննիչներու վերադարձի հարցը գինուորական գործողութեան մը ձեւաւարկելու համար իրաքի ղէմ: Սպարի յայտնեց նաեւ, որ Ուաշինկթընի նպատակն է հակազդիտի տակ առնել ամբողջ շրջանը, տկարացնել արաբական բոլոր երկիրները եւ զօրացնել ու ամրապնդել Իսրայէլի դիրքը, որպէսզի դառնայ շրջանային տիրական ուժ:

Իրաքեան «Սաուրա» թերթը իր կարգին ամբաստանեց Պուշի, ղիտել տալով, որ ՄԱԿի մէջ ար-



Քոֆի ԱՄԱԿ՝ Կ'արտասաճ իր խօսքը

տասանելիք ճառով, ան կը փորձէ միջազգային գորակցութիւն ապահովել իրաքի ղէմ գինուորական գործողութեան: Միւս կողմէ, իրաքի մէջ ՄԱԿի մարդկային իրաւանց յանձնաժողովի ներկայացուցիչը կոչ ուղղեց Պաղեստի առանց նախապայմաններու ընդունելու վերադարձը զէնքի քննիչներուն: Անտրէաս Մանրոմաթիս ըսաւ, որ իրաքի կառավարութեան պարտականութիւնն է ամբողջութեամբ ենթարկուելու Ապահովութեան Խորհուրդին որոշումներուն:

### ԱՆԱՆ ԿԸ ՄԵՐԺԵ ՄԻԱԿՈՂԱՄԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՈՎ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան անուղղակի կերպով քննադատեց Միացեալ Նահանգները, ղիտել տալով, որ որեւէ երկիր ինքնապաշտպանութեան իրաւունք ունի, երբ յարձակումի ենթարկուի, սակայն միայն ՄԱԿ իրաւասութիւն ունի լիազօրելու ուժի գործածութիւնը, երբ անհկա ինքնապաշտպանութեան ծիրէն դուրս կ'ընկնայ:

ՄԱԿի ընդհանուր քարտուղարութիւնը Չորեքշաբթի գիշեր հրապարկած էր Անանի ճառը,

որը քարտասանեց երէկ Ընդհանուր Ժողովի բացման նիստին:

Իր խօսքին մէջ Անան անուշով չնչեց Միացեալ Նահանգները, որոնց հանդէպ սակայն սկնացողութիւնը յստակ էր, երբ ըսաւ, թէ երբ պետութիւններ կ'որոշեն ուժի գործածութեան դիմելու հակազդիտի տակ առնելու համար միջազգային ապահովութեան ու խաղաղութեան սպառնացող երեւոյթներ, ՄԱԿ իրաւասու միակ կառույցն է, որ կրնայ արտօնել ուժի գործածութիւնը այլ երկիրի մը ղէմ: Անան շեշտեց, որ արտօնելի չեն միակողմանի որոշումները եւ անոնց արդիւնք գործողութեան արարքները: Ան աւելցուց, որ ամէնէն հզօր նկատուած պետու-

թիւններն անգամ կը գիտակցին, որ կարիքը ունին գործակցելու այլ երկիրներու հետ:

● ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՓՐԻԿԵՒԻ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՊԱՏԱՆՆԵՐ ՄԱՆՈՒՄԸ «աշխարհի խաղաղութեան սպառնալիք» յայտարարեց Միացեալ Նահանգները: Մասնաւորապէս Ուաշինկթընը, որ առանձին կը գործէ՝ ապահովելով ՄԱԿի դերակատարութիւնը: Ան աւելցուց, որ ամերիկեան արմատական քաղաքականութեան նպատակն է գոհացնել բարիդի եւ զէնքի ամերիկեան ընկերութիւնները:

● ԹՈՒՐԻՔԻՈՑ պաշտպանութեան նախարար յայտնեց, որ իրաք պէտք է արտօնէ քննիչներուն վերադարձը: Ան աւելցուց, որ Անգարա իրաքի ղէմ յարձակումի գործովի պիտի կանգնի, երբ անհկա վայելէ ՄԱԿի հասնութիւնը: Իսկ վարչապետ Պիւլէնի ինքնապաշտպանութեան ծիրէն դուրս կ'ընկնայ:

● ՏՐԱՆՍԻՆ Եւ անոր դաշնակիցները իրաքի նախագահ Սաուտալ Ջիւսէյնի պէտք է հակացնեն, թէ գինուորական գործողութեան մը սպառնալիքը իրականութիւն պիտի դառնայ, եթէ Պաղեստ շարունակէ քննիչներուն վերադարձը, յայտնեց նախագահ Փաք Շիրաքի մէկ խորհրդատուն:

● ԲՐԱՆՏԱՆԻՈՑ պաշտպանութեան նախարար ձէֆ Չուս ըսաւ, որ ՄԱԿ պէտք է վերջնապէս տայ իրաքի՝ ենթարկուելու համար Ապահովութեան Խորհուրդի որոշումներուն, յատկապէս քննիչներու վերադարձը արտօնելու համար:

● ՔՐԵՏՈՒՆԻՈՑ պաշտպանութեան նախարար ձէֆ Չուս ըսաւ, որ ՄԱԿ պէտք է վերջնապէս տայ իրաքի՝ ենթարկուելու համար Ապահովութեան Խորհուրդի որոշումներուն, յատկապէս քննիչներու վերադարձը արտօնելու համար:

(ՌՈՅԹԸՐԸ)

(ՌՈՅԹԸՐԸ)

### ԸՍՏ ՔՐԵԹԵԼԵՆԻ

### ՍԵՊՏԵՄԲԵՐ 11Ի ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ՝ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ԱՍԲԱՐՏԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՇԵՏԵՒԱՆՔ



Քրեթելն - Պուշկին

Քանադայի վարչապետ Ժան Քրեթելն Սեպտեմբեր 11ի յարձակումները նկատած է Մ. Նահանգներու եւ ընդհանրապէս Արեւմուտքի «անձնասիրութեան եւ ամբարտաւանութեան» հետեւանքը:

Քրեթելն արեւմտեան մեծ երկրի մը առաջին ղեկավարն է, որ կ'ըսէ, թէ անձնապաշտպան գործողութիւններուն ձեռնարկած օդահանքներուն զրդապատճառները կրնան սանձուի անհրաժեշտութիւնը չհասկցող հարուստ եւ ուժեղ Արեւմուտքի մը սխալ քաղաքականութիւնը ըլլալ:

Վարչապետը, որ 9 տարիէ ի վեր իշխանութեան վրայ է, «Սի. Պի. Սի.» կայանին Չորեքշաբթի գիշեր յայտնած է, թէ մեծ ընդվզում գոյութիւն ունի՝ աշխարհի հետզհետէ ան արձանագրող աղբատներուն եւ իրենց ունեցուածքը կորսնցուցածներուն հանդէպ գորաւոր պետութեանց վարուելակերպին գծով:

«Կարելի չէ իրաւասութիւնները օգտագործել» ուրիշներ նուստացնելու աստիճան: Այդ է, որ Արեւմուտեան աշխարհը, ոչ միայն Մ. Նահանգները, պէտք է հասկնայ», ըսած է ան:

Քրեթելն աւելցուցած է, որ իր կարծիքով Արեւմուտեան աշխարհը չափազանց հարուստ դառնալու ընթացքին մէջ կը գտնուի՝ բաղդատած աղբատ աշխարհին «եւ ինքնաբերաբար, մեզ կը դիտեն իբրեւ ամբարտաւան»:

(ՌՈՅԹԸՐԸ)

### ՍՈՒՐԻՈՅ ԶՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ...

Շարունակուած 3րդ էջէն

կանգնին իրենց ազգային պատասխանատուութիւններուն, որովհետեւ Լիբանանի անվտանգութիւնը կախեալ է Սուրիոյ անվտանգութենէն եւ հակառակը: Հաւաքի աւարտին հետագիտները յղուեցան նախագահ գոր. Էմիլ Լահուտի եւ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատի:

Հեռագիրները պարզեցին գորակցութեան հաւաքին յայտարարուած կեցուածքները, ուր բացարձակապէս կը մերժուի ամերիկեան Քոնկրէսին ներկայացուցած Սուրիոյ հաշուետուութեան օրէնքի առաջարկը, որ ուղղակի ոտնձգութիւն մըն է Լիբանանի, Սուրիոյ եւ ամբողջ արաբական աշխարհին ղէմ, եւ կը հակադրուի միջազգային բոլոր ուխտերուն եւ դաշինքներուն, որոնք կը կանոնաւորեն անկախ պետութիւններու միջեւ յարաբերութիւնները:

Հանգիպումը նաեւ հաստատեց, որ միջազգային սիւնական շարժումն ու մանաւանդ Միացեալ Նահանգներու մէջ հրէական լուսին կը կանգնին այս առաջարկի ետին, եւ անոնց նպատակն է վրէժ լուծել Լիբանանէն եւ Սուրիայէն:

Հեռագիրները նաեւ ընդգծեցին, թէ հանդիպումը կառչած է Սուրիոյ հետ բանակցութիւններու նոյն առանցքն ու միջնորդն ճակատագրի բաժնեկու ընտանքին, հայրենի հողի ազատագրումին համար ղեմադրութեան եւ ինքիֆատայի դիմելու Լիբանանի եւ Պաղեստինի իրաւունքին, ինչպէս նաեւ կողանի մէջ ընտանգուած սուրիական հողերուն վերատիրանալու Սուրիոյ իրաւունքին:

Ապա յարդարաբար խօսք առին Փաղանգաւոր կուսակցութեան նախագահ Քարիմ Բազարտուճի, Սուրիոյ հանրապետութեան մեքթիկ ներկայացուցիչ շէյխ Հիշամ Խալիֆէ, Խորհրդակցական Հանդիպումի անունով՝ երեսփոխան Անթուան Հատատ, Լիբանանեան Ազգային Ճակատ կուսակցութեան նախագահ Էրնէսթ Քարամ, Ղովմի կուսակցութեան նախագահ ժըպրան Արապի, «Դիմադրութեան նախագահ Կուսակցութեան անունով» Մօրի Նոհրա, Լիբանանցի ժողովուրդի ձակատ կուսակցութեան նախագահ ժոզֆ Ֆայյատ, երեսփոխան Պասէմ Եամուճ, երեսփոխան Ղազի Չապիթէր, Լիբանանի Համայնավար կուսակցութեան անունով՝ Մօրի Նոհրա, Լիբանանցի ժողովուրդի ձակատ կուսակցութեան նախագահ ժոզֆ Հատատ, Երեսփոխան Սալէմ Խէյր, նախկին երեսփոխան Չահր Սաթիպ, Լիբանանի մէջ Համայնաբարձի ներկայացուցիչ Արաւա Համտան, շիկերու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ մեքթիկ շէյխ Ապտիլ Էմիր Քապալան, երեսփոխան ժամալ Իսմայիլ, երեսփոխան Ալի Խալիլ, երեսփոխան Անան Արաքի եւ Պաղեստինի Ազատագրութեան Ժողովրդավարական ձակատի անունով՝ Ալի Ֆայյատ:

Քարիմ Բազարտուճի, Սուրիոյ հանրապետութեան մեքթիկ ներկայացուցիչ շէյխ Հիշամ Խալիֆէ, Խորհրդակցական Հանդիպումի անունով՝ երեսփոխան Անթուան Հատատ, Լիբանանեան Ազգային Ճակատ կուսակցութեան նախագահ Էրնէսթ Քարամ, Ղովմի կուսակցութեան նախագահ ժըպրան Արապի, «Դիմադրութեան նախագահ Կուսակցութեան անունով» Մօրի Նոհրա, Լիբանանցի ժողովուրդի ձակատ կուսակցութեան նախագահ ժոզֆ Հատատ, Երեսփոխան Սալէմ Խէյր, նախկին երեսփոխան Չահր Սաթիպ, Լիբանանի մէջ Համայնաբարձի ներկայացուցիչ Արաւա Համտան, շիկերու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ մեքթիկ շէյխ Ապտիլ Էմիր Քապալան, երեսփոխան ժամալ Իսմայիլ, երեսփոխան Ալի Խալիլ, երեսփոխան Անան Արաքի եւ Պաղեստինի Ազատագրութեան Ժողովրդավարական ձակատի անունով՝ Ալի Ֆայյատ: